Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գրիգոր Վրույրի Օրդոյանը ծնվել է 1952 թվականին Երևանում ծառայողի ընտանիքում: Հայրը՝ Վրույր Ենոքի Օրդոյանը, բանասեր էր. մահացել է 1974-ին: Մայրը՝ Լիզա Գրիգորի Ջաղեթյանը, քիմիկոս է, ներկայումս՝ թոշակառու:

1959-ին ընդունվել է Երևանի Ա. Մռավյանի անվան միջնակարգ դպրոց և ավարտել 1969-ին: 1970 թվականին ընդունվել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտունի թատերական ֆակուլտետի դերասանական բաժին և ավարտել 1974-ին: Նույն տարի աշխատանքի է անցել Հայաստանի Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի հեռուստատեսային ծրագրերի թողարկման խմբագրությունում՝ որպես խմբագիր: 1974 – 1975 թվականներին պարտադիր զինվորական ծառայության մեջ է գտնվել Խորհրդային բանակում: Ջորացրվելով բանակից՝ 1976-ին շարունակել է աշխատել Հայաստանի Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի դրամատիկական հաղորդումների գլխավոր խմբագրությունում՝ որպես ռեժիսորի ասիստենտ: 1977-1979 թվականներին որպես դերասան աշխատել է Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում: 1979-ին աշխատել է Տեխնիկական էսթետիկայի Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղում՝ որպես ավագ լաբորանտ, ապա նույն թվականին ընդունվե է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Արվեստի ինստիտուտ՝ որպես կրկտսեր գիտաշխատակից:

1985 թվականին Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Արվեստի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Թատրոնը Կիլիկյան Հայաստանում», որի հիման վրա նրան շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Գիտական գործունեությանը զուգահեռ զբաղվել է մանկավարժական աշխատանքով. 1980 թվականից դասավանդել է Երևանի Պետական Համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում «Թատրոնի պատմություն», իսկ 1986-ից՝ Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտում՝ «Դրամայի տեսություն» և «Հայ թատրոնի պատմություն» առարկաները»:

1991 թվականին Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել «Թատրոնը Կիլիկյան Հայաստանում (XII-XIII դդ.)» նրա մենագրությունը:

1991-1996 թվականներին աշխատել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի (1995-ից Երևանի Թատերական արվեստի պետական ինստիտուտ)

թատերական ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ գիտամանկավարժական գործունեությունը զուգորդելով վարչակազմակերպչական աշխատանքի հետ:

1994-ին նրան շնորհվել է թատրոնի պատմության և տեսության ամբիոնի դոցենտի կոչում:

2004-ին Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գիտական խորհրդի փակ քվեարկության արդյունքների հիման վրա ընտրվել է պրոֆեսորի պաշտոնում, իսկ 2008-ին՝ ինստիտոտի Արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի:

2009 թվականին Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Արվեստի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական թեզ «Հայ կրկեսային արվեստի ձևաբանական քննություն. կրկեսի տեսության հարցեր» թեմայով:

Ներկայումս աշխատում եմ նույն ինստիտուտում՝ որպես «Արվեստի պատմության և տեսության » ամբիոնի վարիչ: